

Ապարանի բնապահպանական
տեղեկատվության հասարակական
կենտրոն

Հասցե. ՀՀ, 3103, ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
info_aparan@ aarhus.am



**Public Environmental
Information Center of Aparan**

Address Bagramian 26 , Aparan, 3103, RA
Tel./Fax +/ 252/ 6 23 60
E-mail aarhusaparan@mail.ru
info_aparan@ aarhus.am

ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

«Աջակցել կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը՝
լուծելու շրջակա միջավայրին առնչվող հարցերը»

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբեր
2016թ.



• Ծրագիրն իրականացվում է ԵԱՀԿ Երևանի
գրասենյակի ֆինանսական աջակցությամբ



1. Կենտրոնի 2016թ. նոյեմբեր ամսվա գործունեության ամփոփ նկարագիրը

Ապարանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2016թ. նոյեմբեր ամսվա իր գործունեությունը իրականացրել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի և կենտոնի փորձագետների խորհրդի նախագահի կողմից հաստատված աշխատանքային պլանի համապատասխան:

1. Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել հանդիպումներ համայնքի ղեկավարների, քաղաքապետարանի Կոմունալ ծառայության, գյուղատնտեսության և բնապահպանության, միջհամայնքային կապերի գլխավոր մասնագետների հետ: Քննարկվել են համայնքում առկա բնապահպանական խնդիրները և շահագրգիռ կողմերի հետ համատեղ ուժերով այդ խնդիրների լուծման հարցերը, Օրհուս կենտրոնի դերն ու աջակցությունն այդ խնդիրների լուծման ուղղությամբ: Առանձնացվել են համայնքի սուր բնապահպանական խնդիրները.
 - ✓ քաղաքային աղբավայրի վիճակը խիստ անմխիթար է, կառուցապատված չէ, չի համապատասխանում սահմանված նորմերին,
 - ✓ համայնքի հողերը, հիմնականում ենթարկվում են հողատարման և ողողման, որոշ տեղերում՝ նաև ճահճացման, հողերի նաև ջրերի և շրջակա միջավայրի աղտոտման պատճառ են դառնում հիմնականում պոլիէթիլենային տոպրակները և տարաները,
 - ✓ Համայնքում քիչ են կանաչապատ տարածքները, ինչը պայմանավորված է համայնքապետարանի ֆինանսական միջոցների սղոյությամբ
 - ✓ Համայնքի մի շարք թաղամասերում չկա ջրահեռացման համակարգ, կեղտաջրերի հեռացման համակարգը խիստ թերի է և լուրջ ներդրումների կարիք ունի: Կան թաղամասեր, որոնցում ջրահեռացումը կատարվում է բացօթյա, որը հակասանիտարական իրավիճակ է ստեղծում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ իր կառավարման 15 տարիների ընթացքում այդ ոլորտում ներդրումներ չի իրականացրել:
 - ✓ Ջրամաքրման կայանը ավերված վիճակում է:
 - ✓ Որոշ թաղամասերում խմելու ջրի և կոյուղու գծերը իրար մոտով են անցնում, ինչը կարող է սուր վարակիչ հիվանդությունների բռնկման առիթ դառնալ:
 - ✓ Բարելավման կարիք ունի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վիճակը.



2. Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում Բն. Նախարարության «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների հետ, քննարկվել են կենտրոնի գործունեությանն և առաջիկայում իրականացվելիք ծրագրերին վերաբերող հարցեր, համայնքի բնապահպանական խնդիրները և դրանց բարելավմանն ուղղված միջոցառումները:
3. Մ/Թ նոյեմբեր ամսին 18.11.16. տեղի է ունեցել հանդիպում քաղաքապետարանի Կոմունալ ծառայության գլխավոր մասնագետի հետ, քննարկվել են քաղաքի աղբահանության և դրա բարելավմանը վերաբերող հարցեր: Կարևորվել է կենտրոնի դերն այդ հարցում, հատկապես համայնքի բնակիչների շրջանում համայնքային խնդիրների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորման, ինչպես նաև Էկոլոգիական կրթության, դաստիարակության, էկոլոգիական մտածելակերպի ձևավորման և բնակիչների մասնակցության՝ ջանքերը համատեղելու գոյություն ունեցող բնապահպանական խնդիրները լուծելու և նորերը կանխելու գործում:
4. Հաշվետու ժամանակահատվածում Օրհուս կենտրոնի տարածքը տրամադրվել է ապլ կազմակերպությունների միջոցառումների անցկացման նպատակով:

2016թ. նոյեմբերի 8-ից 18-ը

ՀՀ տարածքային կառավարման նախարարության և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ ուսումնական կենտրոնի մասնագետներին համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացների անցկացման համար : Վերապատրաստման դասընթացի ընթացքում Ապարանի համայնքապետարանի և Ապարանի տարածքի համայնքապետարանների համայնքային ծառայողներն ուսումնասիրեցին՝ Տեղական ինքնակառավարմա մարմիններ իրավասությունը սահմանող ՀՀ օրենսդրությունը, <<Իրավական ակտեր մասին>> ՀՀ օրենքը, Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությունը և կառավարչական հմտություններ:

Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվեցին վկայականներ:



5. Ամսվա ընթացքում կենտրոնը համագործակցել է հասարակական կազմակերպությունների հետ :

30.11.16. կենտրոնը աջակցել է << Հայ կանայք հանուն առողջության>> ՀԿ-ին Օրհուս կենտրոնում<< Առանց սնդիկի ապրանքները առողջության գրավականն են >> թեմայով դասընթաց անցկացնելուն: Կենտրոնի կողմից դասընթացին մասնակցելու էին հրավիրվել համայնքի դպրոցների ուսուցիչներ, մանկապարտեզների, համայնքապետարանի աշխատակիցներ:



6. Նոյեմբերի 21-ից 23-ը ընկած ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը մասնակցել է ԵԱՀԿ քարտուղարության նախաձեռնությամբ տեղի ունեցող միջազգային հանդիպմանը «Օրհուս կենտրոնների տարեկան հանդիպում 2016»-ին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում, Ինչպես նախորդ, այնպես էլ այս տարվա հանդիպումն ուղղված էր ԵԱՀԿ և Օրհուս կենտրոնների ներկայացուցիչների, Օրհուսի Կոնվենցիայի ազգային համակարգողների միավորմանը, կենտրոնների գործունեության և Օրհուսի Կոնվենցիայի իրականացման առաջավոր փորձի ներկայացմանը, ձեռքբերումների և բացթողումների քննարկմանը, փորձի փոխանակմանը, ինչպես նաև համագործակցության ամրապնդմանն ու կենտրոնների փոխգործունեության ձևավորմանը: Օրհուս կենտրոնների Վիեննյան հանդիպման ժամանակ առանձնահատուկ նշանակություն տրվեց կանաչ էկոնոմիկայի և ռեսուրսների արդյունավետ օգտագործման գաղափարին: Շեշտադրում կատարվեց Օրհուս կենտրոնների ներուժի ամրապնդմանը , հեռանկարում, իրենց երկրներում Կանաչ էկոնոմիկայի անցման գործընթացում կենտրոնների ակտիվ մասնակցության առումով :



- 7. Նոյեմբերի ընթացքում կենտրոնի փորձագետն աշխատել է Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ զեկույցի կազման վրա: Ուսումնասիրվել է քաղաքապետարանի քառամյա զարգացման ծրագիրը, կատարվել են լրացումներ բնապահպանական ամենասուր խնդիրների վերաբերյալ, առաջարկվել են բարելավումներ, որոնցով ակնկալվում է լուծել կամ մեղմել խնդիրը, շեշտադրում կատարելով կայունության վրա: **Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ զեկույցը կներկայացվի դեկտեմբեր ամսին:**
- 8. Ամսվա ընթացքում կենտրոնի կողմից իրականացվել է խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, Ավագ դպրոցի ուսուցիչներին և աշակերտներին Ամուլ սարի ոսկու հանքավայրի շահագործման խնդիրների վերաբերյալ, ցուցաբերվել է աջակցություն հանքարդյունաբերությանը վերաբերող միջոցառման կազմակերպման համար:
- 9. Նոյեմբերի 28-ին անցկացվել է կենտրոնի փորձագետներ նիստ, որի օրակարգում **2016թ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների կատարված աշխատանքների ներկայացումն էր ու << Կանաչ >> էկոնոմիկա և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը. Ավստրիական առաջավոր փորձի / թափոնների արդյունավետ կառավարում/ ներկայացումը.**

Փորձագետների խորհուրդը հավանություն տվեց կենտրոնի կատարած աշխատանքներին և առաջարկեցին հետագա ամսում շարունակել գործունեությունը հիմք ընդունելով կենտրոնի տարեկան աշխատանքային ծրագրի նպատակները, տեխնիկական առաջադրանքի պահանջները, ինչպես նաև կազմակերպել միջոցառումներ <<Կանաչ>> էկոնոմիկայի գաղափարի տարածման և տեղակայման նպատակով:



- 10. Կենտրոնի իրագործված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է www.aarhus.am , [Facebook.com`](https://www.facebook.com/aarhus.am) համացանցի սոցիալական խմբերում.
- 11. Կենտրոնի նոյեմբեր ամսին կատարած աշխատանքների հաշվետվությունը ներկայացվել է համայնքի փոխքաղաքապետին
- 12. Կենտրոնի կողմից մատուցվել են մի շարք ծառայություններ` պատճենահանում, տեսաֆիլմեր, համայնքի բնակիչներին / ուսուցիչներ, ուսանողներ/:



Ապարանի Օրհուս կենտրոն

համակարգող`

Նատալյա Մանուկյան

30.11.2016.